

ՀԱՆԴԻՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՄԹՆՈԼՈՐՏԻՆ ՇԱՐԺՄՈՒԽԻՆՔՆ ԵՒ ՀՈՂՄՈՒԽԻՆՔ

(Տես Պր. Ա. էջ 64.)

Հիմայ կը մնայ որ բեւեռային հանդարտութեան գոտին ապացուցանենք, որպէս զի Մօրիի գրութիւնը կարենայ ճշմարտիլ. բարբրի և Պարրով քանի մը փաստերէ մղուած խորհեցան իրապէս հանդարտութեան գոտի ըլլալը 'ի բեւեռ, եւ վերջի ժամանակներս, կ'ըսէ Մօրի, Պէլլօ զայն փորձեցի սառուցեալ գոտին: Սակայն այնպիսի գոտեաց վրայ է փորձը որ դէպ 'ի բեւեռ եղած երկայնութեան սատիճանաց ներքեւ պիտի ճշմարտի. 80 աստիճաննէ վեր՝ ովկ կրնայ պնդել կատարեալ տեղեկութիւն ունենալն: Բայց պիտի ճանանք գաղափար մ'ալ սասանալ ասոր վրայ:

Ինչ որ 'ի ճանապարհորդաց պատմութենէ կ'իմացուի, հոն մարդկային բնակութենէ զուրկ ցրտութիւն մ'է: Յայնքան գժուարութեանց մէջ, որուն աներկիւզ քննիչները հարկադրեցան յաղթել, զրեթէ ոչ երբէք յիշատակուած են այն սաստկաշունչ հողմերը, որք կը վտանգեն Ալպեան անցքերը բարեխառն սատիճանաց ներքեւ, ուր հանդերձ բաւական ցրտութեամբ, շատ հեռու է համնելու բևեռային գտաւուաց ցրտութեան սաստկութեանը ցեսանք որք սառուցներուն մէջ մղաւած և թաղուած շողենաւք, կրցան ձմերել ամբողջ տարիներ: Կը տեսնանք որ այն քաջայանդուկն անձինք կրցան աղատութիւնը քննութեանց ճանապարհորդութիւնն ընել, և Պարբի կրցաւ բալլիսիրով ինչուան 82 աստիճան հասնիլ, որպէս և Քէյն երկայն ժամանակ բնակեցաւ յրային թռուներէ բնակուած

ցուրտ ծովուն եզերքը: Այն պատմութեանց միակիրպութիւնն ընդհատող նկարագրութիւն, բուքն և մրրիկներն չեն, այլ հիւսիսային արշալցյան է որ կը լուսաւորէ մշտնջնաւոր լուսով այն յաւիտենական գիշերուան հանդարտութեան գոտիքը: Եթէ երկնային խըստութեան հետ յուելեալ ըլլար Ալպեան մրրիկաց վշտումը, կարծեմ որ միջոցի ոչ մի կարողութիւնը, և ոչ կամաց կորովութիւնը պիտի կարենային տանել զմարդիկ երկրագնուիս գլխաւոր կէտերն:

Սակայն չուղելով որոշակի զօրութիւն մը տալ արգեամբ փորձերու, զորս արդէն ժողովեցինք, բևեռային հանդարտութեան գոտիքն կատարեալ հարկաւորութիւն մ'է, որ ըստ բնարանական և մերենական օրինաց կը հետի այն հողմոց գրութենէն յորոց բաւական ապացուցուած կ'երմեի: Որպիսի եղանակաւ. — Համարինք որ այժմ, առաջին անգամ, հասարակածին վրայ հաւաքուած օդը, անդադար յինքն ձգելով կողմնակի գաւառուաց օդն, գահավիմի բարձրէն դէպ յունայն բևեռներն: Օդային զանգուած ծիկըն, մի և նոյն արագութեամբ միջօրէականին ամեն կէտերէն հոն հասնելավ, կ'ընդդիմանան 'ի բևեռ, ինչպէս շառաւիրներն 'ի կերոն, և անդ կը բազմանան և քախեն: Սկզբնական արագութենէն շարժեալ և օդոյ անդադար յորդութենէն մղեալ, որ կը հօսի հասարակածին բարձրութենէն, ուր պիտի երթան: Ցած տեղուանք ոչ, վա-

ալն զի կ'ընդդիմանայ երկրիս մակերեւ-
ոյթը . կողմնակի ոչ, վասն զի կը հա-
կառակի ամեն կողմէն յորդացող ըն-
թացքէն , ուրիշ ուղի չմար , բայց
միայն գէպ 'ի վեր շարժէլ , թողով
դիմ մը , որ առաւել կամ պակաս ուղ-
ղահայեացի կը մօտենայ , և հազիւ
բարձրութեան մը հասած ստորին ըն-
թացքին տեղի տալովը կողմնակի կը
կործանի . Այլ այժմ պարզ և ամենա-
ծանօթ երեսութիւն վրայ է գործը : Զրոց
ընթացքին ի՞նչ կը հանդիպի երբ ար-
դեկը մը գտնայ , — կը բարձրանայ .
այսինքն ու զղահայեաց կը բարձրանայ ,
ապա իւր վրայ կը դառնայ , մինչեւ ար-
գելից մակերեսութէն բարձր վիճակի
հասնելով շարունակէ իւր ընթացքը :
Երրոր (Ալղեանց մէջ յաճախ հանդի-
պող) երկու հոսանք խառնուին 'ի
միասին , կամ հակառակ ընթացքով ,
կամ ընդ որ և իցէ անկեամբ , բար-
ձրացումն կըլլայ . յուրը պղասորեալ
կը բարձրանայ , երբեմն բաւական բար-
ձրութեամբ , և կը դառնայ իւր վրայ .
ի՞նչ պիտի ըլլայ , երրոր բովանդակ
երկրագնտիտ գետերը ամենայն կող-
մերէն 'ի մի կէտ խառնուին : Ձերը պիտի
ամբանային ահեղ ցայտմամբ ,
և իշնային ջրոց վրայ , որք անդադար
'ի նոյն կէտ կը խառնուին : Այսպէս
կը հանդիպի օդոց 'ի բնեռ , և այսպէս
կը ձևանան բնեռային հանդարտու-
թեան գոտիք , որք պիտի ըլլան պարզ
գոտիք 'և ոչ ի՞նչ որ կը ճշմարտի արևա-
դարձից , հասարակածի հանդարտու-
թեանց վրայ . վասն զի ուր որ ընթացք
կը հանդիպի շոդեաց խոտացման ոչ մի
պատճառ կայ , և գարծեալ ընթացքն
մի և նոյն ջերմութեան աստիճան ու-
նին , և բաց 'ի ոտցանէ բնեռ հասնե-
լէն առաջ երկրիս վրայ իջած անձրև-
ներով սպառեալ են իւրեանց շոդիքն :

Մինչդեռ օդն բնեռային հանդար-
տութեան գոտեաց բոլորակին մէջ կը
բարձրանայ (խաչանիշ հասամամբ միայն ,
ինչպէս որ կը կարծուի սկզբնական ա-
րագութեան արդեամբը , և որպէս պի-
տի ցուցընենք հասարակածին հան-

գարտութեան գոտեացն վրայ հանդիպի-
լը) սակայն յժողուր նաև հասարակա-
ծին դաւառաց մակերեսութիւն վրայ գա-
տարկութիւնը լցնելու : Ուրպիսի ճամ-
բով պիտի կարենայ հասնիլ հոն . ուրիշ
միջոց չկայ , բայց եթէ ստորին օդոց
ընթացքի վրայ խոտարնակի իջնալ խա-
չածե հատանելով , ինչպէս որ ընդար-
ձակորէն ցուցնեք հանդիպիլն : Այ-
սիսի խաչանիշ հատումը այնպէս դիւ-
բաւ կը հանդիպի , ինչպէս հատանող
օդը , հարկադրելով գրաւել ընդհա-
տուող օդոցն միջնորդուին բովանդակ
բարձրութիւնը , առանց զգալի կերպով
խոտութիւնը յաւելլու . միայն կրնայ
քանակը կրկնապատկել , որով խոտու-
թիւնը կէսի վերածել , երկու ընթաց-
քըն խոտարնակի պիտի անցնին , սը-
րըսկեալ լրոց ցոյտից նման :

Մինչև ցայժմ միջնորդուին շարժման
վրայ բածնիս իւրաքանչիւր կիսադրն-
տին համար առանձինն էր . կը մնայ
միայն այն դէպէն , որով երկու մասերը
իրարու հետ կապեալ են միջնորդուին
շրջանին դրութեանը մէջ . ըստ երևու-
թին գժուարին կէտ է ապացուցանելին
արշային բևեռէն եկած օդոց փոփոխու-
թեան ընթացքը ընդ հակարչային բնե-
ռէն եկողին , այսինքն հասարակածին
վրայ ընթացքի խաչածե հատումը : Այ-
սիայն այս գործողութիւնը բացարձակա-
պէս կարևորէ : Քննենք գէպը մը , որ ե-
թէ ոչ անկարելի , գէթ գժուարին պիտի
ըլլայ մեկնեն , երկու կիսագնտոց մէջ
փոփոխութիւնը շդնելով , այսինքն ա-
նոնց վրայ օդոց նոյնութիւնը ճանցուած
և վարդապետուած է 'ի բնագիտաց :
Դիտենք արդ երկու կիսագնտին վիճա-
կին անհուն տարբերութիւնը , վասն
որոյ կրնան ազդեցութիւն ունենալ
միջնորդուին բազագրութեանը : Հա-
սարակածին հիւսիսային կողմը կիսա-
գունս մ' ունինք , որ կրնայ ըսուիլ ցա-
մաքային կիսագունս , մինչդեռ հարա-
ւայինն ծովային կիսագունս : Մըթ-
նորդուը 'ի հիւսիս բազագրութեան և
և լուծման անհուն աշխատութեան տա-
րելքն կ'ընծայէ , որ կը գործուի մեծաւ

փութով միլիոնաւոր հազարամեջդր քառակուսոյ մակերևութիւն վրայի բոյսերը ընդարձակ գորգ մը ձևացնողը, բոլոր ցամաքաց մակերևութիւն վրայ տարածուած, կը կլլեն մեծ քանակութեամբ թթուուտ բնածխական, ըստ համեմատութեան շատոցընելով զմթթուածինն, մինչդեռ կենդանիք, ցրուեալը երկրիս վրայ, ոչ ինչ նուազ քան գոռունկս, կանեն զթթուածին և արտաշնչեն թթուուր բնածխական։ Հարաւային կեսագնտին վրայ կենդանական և բուսական կեամբը սակաւ երկրի վրայ սահմանափակի, և այնու ամենանուազ արդիւնք մը կ'ըլլայ այն հօր գործւոյն։ Արդ կը հարցուի, եթէ այս պիտի շրաբն զդալի տարբերութիւն մը բերելու իւրաքանչիւր կիսագնտին վրայ, երբոր փոփխակի չփոխանակեն ևս։ Պիտի ըսուի որ բոյսը և կենդանիք, չնառութեան իւրաքանչիւր եղանակաւ իրարու փոխանակող են յարաբերութեամբ մենուրտի, բոյսերը հոսելով այն թթուածինը, զոր կենդանիք կը չնշեն և կենդանիք այն բնածխական թթուուրը, զոր բոյսերը կը սեպհականնեն։ Սակայն գիտենք որ նաև բյուսերը գիշերը, հանգոյն անասնոց, գուրս կու տան բնածխական թթուուտ, իրենք ալ թթուուածին չնշելով, չամարինք ևս որ մի և նոյն կիսագնտի վրայ բոյսերը և կենդանիք ճշդիւ փոխանակեն, այսպիսի եղանակաւ որ օգոյ բաղադրութիւնը զդալի կերպով չայլալի, կրնանք հաւասարապէս մի և նոյն կիսագնտին վերայ գտնալ փոխանակելու պատճառները այնպիսի գործւոփք՝ որք կը լանան փոփխին օգոյ բաղադրութիւնը, ցամաքը կրնայ համարուիլ ապական մակերևոյթի մը, ուրանոր տարրաբանական զօրութեանց կորութիւնը կը գործէ, որչափ որ բազմաթիւ և զօրաւոր կարենայ երեւակայ յուիլ։ Բուսական հողը բոլոր երկրագնտին վրայ բուսոց լուծուելովը կը ձևանայ, հանդերձ անբաւ քանակութեամբ բնածխական թթուուկի բնածխուկ ջրածնական կազր շատ քանա-

կոթեամիր կը գոյանայ մի և նոյն նե-
խեալ բյսերէ և ճահիճներուն մէջէն,
որք ընդարձակ տարածուած են արջա-
յին կիսագնաբին վրայ : Անկենդան, լո-
սածնուկ ջրածնական կազերն կը գո-
յանան կենդանական հիւթերէ, որք
ամենայն տեղ կ'ապականին : Յաւել
այս քիչ ըսածներնուու վրայ այն ար-
դիւնքն, որ ցամաքին մակերևոյթը շո-
ղիացմամբ ոչ երբէք անձրիկ և ցողի
պատճառ կրնար ըլլալ, եթէ մթնոլոր-
տէն առատապէ թացեալ չըլլայ: Հակ-
արջային կիսագնանոր, մակերևոյթի մը
տեղ, որ կրնայ սահմանուիլ տարրաբառ
նական գործառուն մը այնչափ միլիոն
քառակուսի մղնին, որոցեալ թափե-
լու կազզյին նիւթոց հեղեղներ, և նոյն
չափ ալ բնդունիլ, բոլոր մեծամեծ շըն-
չառութեան, խմորման, կիզման թթու-
ութեան գործւոյթ . այն հակարջային
բեկոր, որ բովանդակ աստեց տեղը,
պարզ շոգիացման լեռուցիչ սան մը
կը ներկայացնէ, կրնայ այլափ գարե-
րէ ետքը արջային բևեռին նման նոյն
մժնողորտը պահել : Յաղթահարելու
համար զանոնք, որոնց այս երկու կի-
սագնաոց մէջի ընդհանուր բաղդա-
տութիւնը համոզել, պէտք է մանր հա-
մարուիլ, որչափ որ իւրաքանչիւր կի-
սագնաբին վրայ կը սպառին կամ կը գո-
յանան այն մարմիններէն, որք էական
կամ պատահական մժնողորտը բաղ-
կացուցիք կը համարուին : Եթէ բոլոր
զօղը կտպմաղները այժմ շենք կրնար
հաշուել, սակայն կարեորադոյներէն
մին կարելի է, այսինքն է շոգին, որուն
պարափակ մժնողորտին թացութիւնը,
և յորմէ կախումն ունին անձրիք և ու-
րիշ ջրային երեսոյթներ : Այս հաշիւը
ըրին, և արդիւնքը յաղթանակեց ՚ի
կողմն հասարակածին խաչածն հատ-
ման :

Ըստ գեղջցիկ Նմանութեան Մօրիի,
Երկրագնատիս ոռոգանելու մասին մէջ,
մինուղրտոն՝ ջրաբաշխական մեծ մե-
քենայ մը կը ներկայացնէ, որուն ծո-
վերն լեռուցիշ կամ սանն են, և ցա-
մաքն, մանաւանդ բարձր տեղուանքն,

լոտացուցիչքն են։ Մեքենայ մ'է որուն աշխատութիւնն արգարե ահաւոր է։ Տարեկան անձրեաց քանակութիւնն այնպէս է որ կրնայ երկրիս մակերեւոյթն ծածկել 1^ր, 52 բարձրութեամբ։ Հողմերն ուրեմն ամ ըստ ամէ օդային գաւառաց մէջ այնքան քանակութիւն ջրոյ պէտք է բարձրացնեն՝ զոր կրնանք ներկայացնել 3000 միլն լոյնութեամբ լնէ, որուն երկայնութիւնն ևս ըլլոյ 21000 միլն և խորութիւնն գրեթէ 5 (4^ր, 87)։ Այս ջրաբախական մեքենայն Եւրոպից՝ ի բովանդակ ջրաբաշխական զօրութենէն 800 անդամ աւելի է։

Մաթեմադիդական բացայայտութեալք վերածելու զայն որ բնաբանապէս յայտնի է, պէտք է հաշուել իւրաքանչիւր կիսագնուոց վրայ ինած անձրեաց քանակութիւնը, և տեսնալ ենթազրութեանց որ թուանշանին կը համապատասխանեն։ Կարելի ենթազրութիւնը՝ որք հաշուէ իրրե հիմն կը ծառայեն, երկք են։ Ա. կամ ընթացքն չեն փոխանակեր, և յիւրաքանչիւր կիսագունացուն ըստ իւր շոգիացման մակերեւութին՝ պիտի ինչնայ համեմատական անձրեաց քանակութիւնն մը, որով նուազ յարջային և բազում՝ ի հակարջային կիսագունագունացուն։ Բ. կամ մօճնողը տիին ընթացքն՝ ի հաստրակած կը խառնուին, հոսելով ապա հաւասար մասամբ դէպ ՚ի երկու բնեւու, անձրեւի քանակութիւնը հաւասար պիտի ըլլոյ յիւրաքանչիւր կիսագունացուն գ. կամ դոյ խաշանիշ հասոււմն, և առաջին ենթադրութեան հակառակ պիտի հանդիպի։ Հարաւային կիսագնուուն վրայ անձրեսի քանակութիւնը համեմատական պիտի ըլլոյ հիւսիսային կիսագնուուն շոգիացընող մակերեւութիւն, և ընդհակառակն աշխիք այս երկք ենթադրութեանց որուն կը համապատասխանեն։

Հաջին հաղիւ սկսուեցաւ, և նըշանագիրը անկատաք և անստոյդ են։ բայց սակայն պայծառ եղանակաւ ՚ի կողմն են երրորդ ենթադրութեան, մերժելով միւս երկուքն ։ Ճանադրնի

ջրաբախայիլն բաղդատական ֆննութիւններն միոյն բարեխմառն գոտիներն կը պարունակեն։ սակայն և այնպէս ստուգիչը են։

Հասարակածին հարաւային կողմի շոգիացնող մակերեւութիւն 75 միլիոն քառակուսի մղն է, և ՚ի հիւսիսային կողմն 25 միլիոն։ Վերջինս ուրեմն երկիրագունական մակերեւութիւն 1/4 կը ներկայացնէ, և առաջինն չէ։ Արջային կիսագնուուն վրայ, որ ծովուց պատուն է, տարեկան անձրեսին չափն իրեւ միրութիւն առնովվ, որ 94 հարիւրոգամէդը է, պէտք է հակարջային կիսագնուուն վրայ 94 հարիւրորդտմէդը ըլլոյ՝ յետ հասարակածին վրայ օդոյ խառնման ենթադրութեանը, և 25,82 այսինքն եռապատիկն, համարելով որ իւրաքանչիւր կիսագունաց իւր ծովիբերն ուորդանի ընդ հակառակն զննաղնի հաշիւն մեզի կ'ըսէ, որ հակարջային կիսագնուուն վրայ տարուէ տարի 66 հարիւրորդամէդը ջուր կ'իջնայ։ Փորձն արդարե զարմանայի է։ Հարաւային կիսագնուուն վրայ եկած անձրել 1/4 անգամ աւելի նուազ է քան ինչ որ պէտք էր գալ, եթէ երկու կիսագնուուց շոգիքն չփոփոխէին, և գրեթէ 1/4 անգամ աւելի նուազ պիտի ըլլոյ, եթէ ՚ի հասարակած կատարեալ օդոյ խառնութիւն դնէինք։ Արջինքն ուրեմն հրաշալի եղանակաւ ՚ի կողմն է հողմոց խաշանիչ հատման։ Հարաւային շոգին որ կ'երթայ ՚ի հիւսիս, և ընդհակառակն դնելով ուրեմն համեմատական հաշիւն մը ընդ մէջ անձրեաց քանակութեան և իւրաքանչիւր կիսագնուուն շոգիացնող մակերեւութիւն, կը դտնալով թիւերն շրջելով, միայն տարբերութիւնն մը աւելի կամ նուազ 26 հարիւրորդամէդը։ այսինքն այս օտարութիւն առերկացիւս յառաջ գայ անձրեաց քանակութիւնը շոգիացնող մակերեւութիւն խոտոր համեմատական ըլլալէն։ Յիւրաւի առնելով անձրեաց ամբողջութիւնը, որ երկու կիսագնուուց վերայ կ'իջնայ 4^ր 60, պէտք է ունենանք, իւրոքոնչիւր կիսագնուուն շոգիացնող

մակերևութին համեմատ, 40 հարիւրողամէջր 'ի հիւսիսային և 120 հարիւրողամէջր 'ի հարաւային կիսագունատ. ընդհակառակն, ինչպէս որ ըսկիք, 94 հարիւրողամէջր է յարջային և 66 հարիւրողամէջր 'ի հակարջային կիսագունատ, այսինքն թիւերն շրջած, միայն 26 հարիւրողամէջր աւելի կամ նուազ տարբերութեամբ:

Աւելի տեսանելի ընելու համար երկու կիսագնուոց վրայի անձրեաց փոփոխութեան երևոյթն, հետևեալ կերպով կը ներկայացնեմք, ուր առնելով իբր հիմն հաշուի, համեմատութիւնն

ընդ մէջ իւրաքանչիւր կիսագնատին շողիացնող մակերևութիւն և ամբողջական անձրեին քանակութեանը, որ տարուէ տարի կ'իջնայ բարեխառն գտնեաց վերայ 160 հարիւրողամէջրի, տեսնենք ենիւրադական քանակութեան թիւը, որը բացայացնուած իւրաքանչիւր կիսագնատին վրայ եկած անձրեները, երբոր իւրեանց ջրովն կ'ոռոգեն, և շրջել, իրական քանակութիւնն բացատրելու համար, յաւելլով իւրաքանչիւրին տարբերութիւնը, 'ի պաշտպանութիւն խոտորեալ հողմոց խաշանիշ հատման փոփոխութեանը:

Նոգիացնող մակերեւոյթ Ենթագրական քանակութիւն Իրական քանակութիւն

Հիւսագնուուու 25 միջին քառակուսիմին 40 հարիւրողամէջր	94—26=120 հարիւրողամէջր
Հար. » 75 » » 120	» 66—26= 40 »

Որչափ որ իրական և Ենթագրական քանակութեանց տարբերութիւնը մեծ ըլլայ, այսինքն այն բանն որ պիտի ըլլար երկու կիսագնուոց օդոյն փոփոխութեան ենթագրութեամբ, սակայն արդիւնքն Մօրիի պահնելի և որոշչի երեցան: Եւ արդեամբ այնպէս են. բայց դեռ աւելի պիտի ըլլան, երբ հայուին մէջ պարագայ մը զիտուի, որ Մօրի չանդրադարձաւ, և այս բաւական է այնպէս փոփոխելու հաշուին արտադրեալը, որով անհամաձայնութեան ամենայն տարբերութիւնը անյայտ կ'ըլլայ, և ընդհակառակն կը ճշմարտի տարբերութիւն մը 'ի կողմն մեր ենթադրութեան:

Ենձրեկի քանակութիւնը որ կ'իջնայ որոշեալ տեղոյ մը վերսայ, հարիւրամէջրով կը բացատրուի, և կը ներկայացնէ ջուրին երկրիս վերսայ աստիճանին բարձրութիւնը, երբ բովանդակ անձրենն մնար. Այսպէս կ'որոշուի ջրաբայխին (udometrico) համեմատութիւնը զանազան օդոյ մասին մէջ, զանց առնելով տարածութիւնը: Գաւառ մը ուրիշ աւելի անձրեւոտ պիտի ըլլայ, միայն այն պատճառաւ որ առաջնոյն վերսայ ջրոյն բարձրութիւնը աւելի է քան թէ երկորդին, որ և իցէ ըլլայ

այս բաղդատեալ գաւառաց տարածութիւնը: Իւրաքանչիւր որ կը տեսնայ, որ անձրեին իրական քանակութեանը վրայ չէ հաշուը, որ այլ և այլ գաւառաց վրայ կ'իջնայ, և այս քանակութիւնը կ'ունենանք բազմապատկերով ջրոյ բարձրութեան չափը ծածկուած տեղովոյն չափին հետ, երկու կիսագընաց ջրաբայխական պայմանաց մէջ մեր հաստատած բաղդատութիւնը մեծ կարեւորութիւն չունի գիտնալի եթէ կիսագունատ մը միւսէն աւելի անձրեւութեր ըլլայ, որչափ ճանշանալն անձրենին իրական քանակութիւնը որ իւրաքանչիւր կիսագնուտին վրայ կ'իջնայ: Այսոր համենելու համար, պէտք է դիտենք նաև տարածութիւնը: Բայց երկու կիսագունատ հաւասար օդոյ տարածութիւնը չէն ներկայացներ:

Շատ տարբեր է երկրագնտիս ոռոգելու մեծ մեքենականութեան մէջ, երկու կիսագնուոց մակերևութիւն գործողութիւնը, ըստ ծովային կամ ցամաքային ըլլալուն, առաջինն ծառայելով երբեն չեռուցիչ կամ սան, երկրորդն երբեն խոտացուցիչ: Անձրեկը գրեթէ ցամաքային երեւոյթք են: Ալիշեան գաւառները, այսինքն հասարակածին գաւառները, միանգամայն պայծառ և

անձրևաբեր են : թայց պարզութիւնն
մշտնինսաւոր է ծովոց վրայ, և անձրևն
ցամփաց վրայ : Ցամսան, և մասնաւո-
րապէս մեծամեծ լեռանց գորգաթն են
որ չորացուցանեն զհողմն, մինչեւ ծո-
վերն պարարեն շոգուով : Եթէ անձրեք
ցամփային երևոյթ մ'են, երկու կի-
սագնտոց վրայ անոնց քանակութիւնը
կը հաշուի ըստ ցամփան տարածու-
թեանը : Ինչ կը հետեւի :

Հասարակածին հարաւային մասին
մէջ երկիրները կը ներկայացընեն եր-
կրագնտիս ցամփին ¼, և հիւսիսա-
յին ցամսանը ½ : Փոխանակ անձրեց
քանակութիւնը հաստատելու, որ եր-
կու կիսագնտոց ցամփաց վրայ կ'իջ-
նայ, բազմնպատկերվ ջրոյն բարձրու-
թիւնը մակերսութիւն տարածովեան
հետ, կրնանք հաւասարապէս հաստա-
տել բանակութեան համեմատութիւնը,
համարելով երկու կիսագնտի երկիր-
ները իրեւ հաւասար տարածովեամբ,
և հետևաբար եռապատկերվ ջրին բար-
ձրութեան խորութիւնը արջային եր-
կիրներու վրայ, որ իրենց իրական
տարածութեան ½ պիտի ըլլայ : Այս-
պէս ըներով պիտի ունենանք ըստ հա-
շուի ձոնսդընի անձրեին իւրսքանիւր
կիսագնտոց վրայ տարեկան բարձրու-
թիւնը հետևեալ հաշուով :

Հար- կիսագունա, 66 հարիւրորդամէդր = 0,66
Հիւս . » հարիւրորդամէդր 94 × 3 = 2,82

Կը տեսնենք ուրեմն ինչպէս ան-
ձրեաց իրական քանակութիւնը յիւ-
րաքանչիւր կիսագունա, հրաշալի եղա-
նակաւ կողմ՝ կ'ըլլան երկու կիսագըն-
տոց մէջի շոգուոյ փոփոխութեանը : Սա-
կայն յայսմ ենթազրութեան բաղդա-
տելով մակերսութիւն տարածութիւնը
անձրեին բարձրութեանը հետ, որ իւ-
րաքանչիւր տարի կը ծածկէ արջային
երկիրները, պէտք է հակարջային բե-
ռուին ծածկած ջրոյ բարձրութեան ե-
ռապատկեկն ըլլայ : Պէտք է ուրեմն ըլլայ
0,66 × 3 = 1,98, մինչեւ 2 × 82 է :

Աստ կրնայ յարմարիլ այն առածն,
թէ Որ յոյժ ցոցանէ ոչ ինչ ցոցանէ.
բայց ընդհակառակն, նեկատվոլ հա-


շուին մէջ մոցուցած տարերաց սաս-
տիկ աղքատութիւնը, որ պատճառ
կ'ըլլայ բաւականէն աւելի իրականին և
վարդապետականին մէջի ընդդիմու-
թեանցը. որպէս և իցէ անձրեկ սաստ-
կութիւն մը փորձուած է արջային կի-
սագնախնին վրայ բաղդատութեամբ հա-
րաւայինին, և այս գէպքն է, յորում
գծուաբաւ կրնայ առաջարկութիւն մը
աւելի պայծառ ապացուցուիլ. որ
կ'ընդունի շոգեաց փոփոխութիւնը, ո-
րով երկու կիսագնտից մէջ օդոյ ըն-
թացը :

Ինչ որ հաշուով կը ստուգուի, իւրա-
քանչիւր որ աչքով կրնայ տեսնել, եր-
բոր նայուածքը գարձնէ կիսագնտից
վրայ : Ջրաբաշմական (idrografico)՝
ամենայն փոքր տախտակներն այս ըզ-
գամի գէպքն կը յայտնեն՝ որ ամենայն
մեծ գետերն կ'ընթանան յարջային
բեկու. Աւստրալիա և հարաւային Ա-
ֆրիկէ այն ջրոց մեծ քանակութեամբը
չեն հոչակուիր, որը արջային բեկուը
կ'ոռոգեն : Գետերն կրնան անձանօթ
քսուիլ հարաւային կղզեաց մէջ : Նյոն
խոկ հարաւային Ամերիկէյ մրակ նըշա-
նաւոր գետն Ռիոյ տըլա թլագան է.
վասն զի Ամեզոնաց Ռիոնի բերանն 'ի
հասարակած է, և իւր ջրոց մեծագոյն
մասը կը թափէ յարջային կիսագունու-
տու : — Բայց կ'առարկուի, ինչպէս կրնայ
ըլլալ որ հարաւային կիսագնտին վրայ
այնչափ գետեր ըլլան, ինչպէս հիւսի-
սայինին վրայ, եթէ այսպէս անհաւա-
սար են ցամփաց մակերսույթը : Կը
պատասխանենք, որ գէթ համեմատու-
թիւն մը պէտք է ըլլայ : Բաղդատեցէք
երկիր երկիր հետ, մակերսույթը մակ-
երնութիւն հետ, Աւստրալիա Եւրոպայի,
հարաւային Ամերիկէն և Ամերիկան հիւ-
սիսային Ամերիկէն և Ամերիկայի հետ,
միշտ հարաւային երկիրները 'ի ջրոց
ազքատ պիտի գտնանք, մինչեւ հիւ-
սիսայինին ոտզեալ են ջրով :

Զօրաւոր ապացոյց մ'ալ 'ի կողմն
հասարակածի խաչաձև հատմանն Յար-
ջային կիսագունա ձմեռը աւելի կ'ան-
ձրեէքան թէ ամառն. կը վկայէ Մօրի

Եթէ արդիւնքն ճշգութեամբ չճշմարտի յեւրոպա, զարաւողութեանց երկիրը, յորում յամենայն եղոնակի գրեթէ հաւասարապէս կ'անձրեէ, ստուգիւ հաստատեալ է՝ի համապատասխանող գաւառաց հիւսիսային Ամերիկոյ, այսինքն ուղղակի Երրովիոյ նման հարատրևմանտեսան հողմոց ներքեւ արեմուեան Երկիրներէն : ՅՈրէկոն, որպէս յեւրոպա, յամենայն ամիս կ'անձրեէ, բայց ձմեռն հինգ անգամ աւելի քան զաման : Եթէ կիսուգնափ մը վրայ անձրիք համեմատական են նոյն կիսուգնին ծովուց, ինչպէս ուրեմն ամառուածն մէջ քանակութիւնը նուազի, երբոր աւելի է շոգիացումը, և աճի ձմեռն, երբոր նուազ է շոգիացումը, ընդունելով խաչանիշ հասման զրու-

տար զօրութիւններէ, որ փոփոխակի կը չնշուին : Նմանապէս երկու բեւռներէ ձգեալ, ամենաաթեթէ մղման մը պէտք ունի, որպէս զի՞ մի կոմմիւն ձգողութեան հնազանդի, և այսպիսի մղում՝ մը ուրիշ տեղ կը գտնայ: Համարինք մ զանդուածիկ մը, ինչպէս որ 5 Զիր կը ցուցընէ, հարաւային բևռուէն կը մեկնի, այլիզեանի նման կը համանի հասարակած՝ի ա: Անդ տաքնալով աւելի կը լիժեթենայ և զօրութենէ մը ստիպուած է, որ զինքը ուղղահայեցաց ար գծին վրայ կը բարձրացընէ, բայց այն զանդուածիկն աւ համանելով, իր սկզբնական արագութենէն գեռ մաս մը կը պահէ, որ զինքը պիտի մղէ ակտն անցնիլ և դէպ ՚ի հիւսիս ուղղուիլ: Այս զօրութիւնը բոլորովին ջնջուած է հիւսիսէն եկող զանգուածոց ուղիղ բարխինէ, ինչպէս որ կը վըկայէ մթնոլորտին շրջանին դրութիւնը, նաև մտածելով օդային զանգուածոց սաստիկ առածգութիւնը և շարժումը, որը կրնան բախելով, իրարու քսուելով անցնիլ: Ուրեմն մեր զանգուածիկը երբ աւ կը հասնի, ստիպուած է երկու զօրութիւններէ, մէկը միւսին ուղղանիլին, առաջինն որ կը բարձրացնէ ար ուղղահայեացին վրայ, երկրորդն որ



Ձև 5.— Հողմոց հասարակածներ վրայ խաչանիշ հաստութեալ:

թիւնը, այս գէպին կը մեկնուին: Հիւսիսային ցամաքաց վրայ ձմեռն, հարաւային ծովուց վրայ ամառն է: Պիտի աճին խաչացուցիչ արդիւնքն, որշափի որ առնին կրակին աճի :

Ստիայն մեքենական օրինաց վրաց հիմնեալ, կ'երեկ որ հասարակածին խաչաձև հատումը մի և նոյն հարկաւոր պատճառներէ առաջ կու գոյ, ինչպէս արևագարձիցն: Հասարակածին վրայ զանգուածիկ մը այնպիսի վիճակի մէջ կը գտնուի: որ անտարերութեան կ'ըսուի, և է մարմին մը վերամբարձեալ երկու հակառակ և հաւա-

կը մղէ ամէ հորիզոնականին վրայ: արդուրեմն պիտի հետեւի ագ տրամանիվունըն, որուն խոտորութիւնը անորոշ կը մնայ: Արդ անտարերութեան կէտը պիտի անցնի, և պիտի հնազանդի այն տիրող ձգողական զօրութեան որ գէպ ՚ի հիւսիս զինքը կը մղէ: Մի և նոյն պատճառաւ մ՝ զանգուածիկը որ հիւսիսէն կու գայ՝ ադ տրամանկան պիտի հետեւի, և դէպ ՚ի հակարչային բևռու տարուի: Հասարակածին խաչանիշ հատման այսպիսի մեկնութիւն մը այնչափ պարզ կ'երեկի, որշափի որ տրամաբանական ճշգութիւն ունի: